ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի
Նախարար Զարուհի Բաթոյանին
Եվրոպական քոլեջի ուսանող
Արտյոմ Օհանյանից
30/08/2019

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի տիկին Բաթոյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42 և 51 հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ ՀՀ Լոռու մարզում երիտասարդների զբաղվածության 2018-2019 թվականների ցուցանիշների մասին:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ)։ Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցմանս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը: